ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԱՐՈՆ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ներսիսյան.

Ի պատասխան Ձեր 01.03.2019թ. հ.01/54Մ գրության՝ տեղեկացվում է.

Երևան համայնքի սեփականություն հանդիսացող գույքերն օտարվում կամ վարձակալության են տրամադրվում գույքի օգտագործման տրամադրման և օտարման ամենամյա ծրագրին համապատասխան, որը սահմանում է նաև գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները: Նշված ծրագրի համաձայն՝ համայնքային սեփականություն հանդիսացող գույքը տրամադրվում է աճուրդով կամ մրցույթով Երևանի քաղաքապետարանում գործող Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման աճուրդը և մրցույթը կազմակերպող ու անցկացնող հանձնաժողովի միջոցով: Սահմանված կարգով տրամադրման ենթակա տարածքների վարձակալության կամ օտարման մրցույթների և աճուրդների կազմակերպման նպատակով համապատասխան հայտարարությունները տեղակայվում են www.yerevan.am կայքում և մամուլում:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Երևան քաղաքում գործում են «Orange» և «Արարատ» թենիսի մասնավոր ակումբները՝ վճարովի սկզբունքներով: Երևանի քաղաքապետարանի ենթակայության «Շենգավիթի սեղանի թենիսի և թենիսի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ում գործում են խմբեր, որոնք պայմանավորվածության համաձայն՝ ուսումնամարզական գործընթացը կազմակերպում են «Արարատ» թենիսի ակումբում՝ անվճար հիմունքներով:

Շենգավիթ վարչական շրջանի բնակիչ Լ.Թորոսյանը մարզչական գործունեություն ծավալելու համար կարող է դիմել «Շենգավիթի սեղանի թենիսի և թենիսի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի տնօրենին՝ թափուր աշխատատեղի դեպքում աշխատանքի ընդունվելու նպատակով (հասցե՝ Ե.Թադևոսյան 11)՝ հնարավորություն տալով նրան մարզումներ կազմակերպել բազմաֆունկցիոնալ, արհեստական խոտածածկով դաշտերում: Մարզադպրոցում պարապմունքներն անց են կացվում անվճար հիմունքներով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ